ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4481-Ա « 11 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի Հ.811-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Արթուր Նիկողոսյանի 09.09.2026թ. հ.Դ-97150-26 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2026 թվականի փետրվարի 12-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.811-Ա որոշման հավելվածի 3-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
11.09.2026թ.
հ. 4481-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Արթուր Նիկողոսյան	Լ. Զաքարյան /Նորքի 7-րդ/ փողոց, հ.161/1 և հ.162/3	հողամաս	Արթուր Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Լ. Զաքարյան /Նորքի 7-րդ/ փողոցի հ.161/1 և հ.162/3 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.22112021-01-0117 և հ.25122024-01-0624, բնակելի տուն՝ 6.57քմ/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Լ. Զաքարյան փողոց, հ.162/3	01093D9JNTEH	
2	Թամարա և Միլիտոս Դավթյաններ	Թումանյան փողոց, հ.24 շենք հ.46 և հ.26ա շենք, հ.3	տարածք	09.06.2017թ. հ.01/19-Դ-865-190 ավարտական ակտի /շահագործման թույլտվություն/ համաձայն, Թամարա և Միլիտոս Դավթյանների կողմից՝ Թումանյան փողոցի հ.24 շենքի հ.46 և հ.26ա շենքի հ.3 հասցեներում վերակառուցված տարածքին և բնակարանին տրամադրել հասցե՝ Հ. Թումանյան փողոց, հ.26ա շենք, հ.3	01063UNVMMQY	
3	Էդուարդ Խաչատրյան /լիազորված անձ/ Սամվել Մարտիրոսյան	Վիլնյուսի փողոց, հ.25 շենք, հ.91	բնակարան	Սամվել Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Վիլնյուսի փողոցի հ.25 շենքի հ.91 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.06072026-01-0108, ընդհ. բաժն. 1.2քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 43.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վիլնյուսի փողոց, հ.25 շենք, բն.91/1	01083FXUBYJF	
4	Վարդան Մարտիրոսյան	Ե. Կողբացու փողոց, հ.1ա շենք, հ.79	բնակարան	Վարդան Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Ե. Կողբացու փողոցի հ.1ա շենքի հ.79 հասցեում գտնվող բնակարանին /վկ. հ.14082019-01-0083/ տրամադրել հասցե՝ Ե. Կողբացու փողոց, հ.1ա շենք, բն.88	01063GBNT9TZ	

5	Արթուր Վերմիշյան /լիազորված անձ/ Լուսինե Տիգրանյան և Հրանտ Բադալյան /սեփականատեր/	Ն. Մառի փողոց, նրբանցք, հ.6 շենք, հ.86	բնակարան	Լուսինե Տիգրանյանին և Հրանտ Բադալյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Ն. Մառի փողոցի նրբանցքի հ.6 շենքի հ.86 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ. 02072026-01-0296, ընդհ. բաժն. 4.54քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 29.85քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ն. Մառի փողոց, նրբանցք, հ.6 շենք, բն.86/1	01083NLGKTA5	
6	Արթուր Վերմիշյան /լիազորված անձ/ Լուսինե Տիգրանյան և Հրանտ Բադալյան /սեփականատեր/	Ն. Մառի փողոց, նրբանցք, հ.6 շենք, հ.86	բնակարան	Լուսինե Տիգրանյանին և Հրանտ Բադալյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Ն. Մառի փողոցի նրբանցքի հ.6 շենքի հ.86 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ. 02072026-01-0296, ընդհ. բաժն. 4.54քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 27.08քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ն. Մառի փողոց, նրբանցք, հ.6 շենք, բն.86/2	01083WQ7APNH	
7	Աստղիկ Հովհաննիսյան /լիազորված անձ/ Ալբերտ Լանչյան /սեփականատեր/	Հ. Պարոնյան փողոց, հ.11 շենք, հ.5	բնակարան	Ալբերտ Լանչյանին սեփականության իրավունքով պատկանող, Հ. Պարոնյան փողոցի հ.11 շենքի հ.5 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ. 25062026-01-0106, ընդհ. բաժն. 6.0քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 38.8քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Հ. Պարոնյան փողոց, հ.11 շենք, բն.5/2	01063ARWG9QP	
8	Նվեր Մարգարյան	Հաղթանակ թաղամաս, 51-րդ տեղամաս, հ.3	հողամաս	Նվեր Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի 51-րդ տեղամասի հ.3 հասցեում գտնվող հողամասին /հիմք՝ Երևանի քաղաքապետի 31.07.2026թ. հ.3794-Ա որոշում և վկ. հ.20042026-01-0177/ տրամադրել հասցե՝ Վ. Պետրոսյան փողոց, 1-ին փակուղի, հ.58/9	01073WFYCBDH	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**